ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հոկտեմբերի 2021 թվականի N 278-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆԱԽՆԱԿԱՆ, ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրման» նկատմամբ 2019 թվականի կատարողականի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 278-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆԱԽՆԱԿԱՆ, ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս - էջ 3
2. Ամփոփագիր - էջ 4
3. Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն - էջ 8
4. Կատարողականի հաշվեքննության արդյունքներ - էջ 13
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 18
6. Առաջարկություններ - էջ 22
7. Հավելվածներ - էջ 23

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 163-Ա (առաջադրանքի հաստատման մասին), ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 213-Ա և 2021 թվականի հուլիսի 30-ի թիվ 203–Ա (առաջադրանքի ժամկետների երկարացման մասին) որոշումներ:
Հաշվեքննության տեսակը	Կատարողականի
Հաշվեքննության առարկան	Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան	2019 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի սեպտեմբերի 22-ից 2021 թվականի հոկտեմբերի 29-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ISSAI 100 և «ISSAI 300 ստանդարտների համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 701-Լ, թիվ 703-Լ և թիվ 705-Լ որոշումներով հաստատվել են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության[1], Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կանոնադրությունները:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019թ. հունիսի 1-ի թիվ 661 որոշմանբ, հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ Նախարարություն) կանոնադրությունը:

2.2 Հաշվեքննության նպատակը

ՀՀ հաշվեքննիչ պալատն իր 2020թ. տարեկան ծրագրի շրջանակներում գնահատել է Նախարարության «Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրերով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության իրագործման արդյունավետությունը:

2.3 Հաշվեքննության խնդիրները

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ով նախատեսված ուսանողական նպաստների տրամադրման պայմանագրերով որպես պայմանագրերի առարկա է սահմանվել նախատեսված ըստ կրթության ուղղությունների ուսանողների (սովորողների) ուսուցում՝ միջին տարեկան սովորողների (ուսանողների), ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակին համապատասխան, ինչպես նաև կանխատեսվող և փաստացի ֆինանսական, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանումը, փաստարկումը, վերլուծությունը, մոնիթորինգը և այլ գործառույթներ:

Հաշվեքննության խնդիրն է սահմանել հիշատակված գործառույթների իրականացման փաստագրումն ու արդյունավետության գնահատումը:

---

[1] *ՀՀ Մշակույթի նախկին նախարարությունը միավորվել է ՀՀ գիտության և կրթության նախկին նախարարությանը 2019թ. հուլիսին:*

2.4 Հաշվեքննության շրջանակը

Հաշվեքննիչ պալատի կողմից կատարողականի հաշվեքննության շրջանակներում հաշվեքննվել են Նախարարության 2019թ. տարեկան գործունեության հետևյալ ծրագրերը՝

- (1045-12003) «Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09030101) ծրագիր, հոդված (472900) «Այլ նպաստներ բյուջեից» (այսուհետ՝ Ծրագիր 1):
- (1045-12004) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09030201) ծրագիր, հոդված (472900) «Այլ նպաստներ բյուջեից» (այսուհետ՝ Ծրագիր 2):
- (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09040102) ծրագիր, հոդված (472900) «Այլ նպաստներ բյուջեից» (այսուհետ՝ Ծրագիր 3):
- (1115-12005) «Հետբուհական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում բուհական հաստատություններում» (09040203) ծրագիր, հոդված (472900) «Այլ նպաստներ բյուջեից» (այսուհետ՝ Ծրագիր 4), Ծրագիր 1-ից մինչև Ծրագիր 4-ը՝ այսուհետ՝ ԾՐԱԳՐԵՐ:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2019թ. ամփոփ ֆինանսական ցուցանիշները ներկայացված են սույն եզրակացության 7-րդ գլխի Հավելված 1-ում:

Հաշվեքննության շրջանակներում ձևակերպվել է Նախարարության, կրթական կազմակերպությունների կողմից տնտեսման, ծախսային և նպատակային արդյունավետության գնահատումը՝ ելնելով հետևյալ հարցադրումներից՝

1. Արդյո՞ք հաշվեքննվող օբյեկտը տիրապետում է ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ իր կանոնադրական գործառույթների իրականացման համար:
2. Գնահատվում է արդյո՞ք Նախարարության ուսանողական նպաստների գծով ԾՐԱԳՐԵՐ-ի յուրաքանչյուր կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները որպես ելակետային տվյալներ, դիտարկելով համապատասխան կազմակերպության ոչ ֆինանսական ցուցանիշների կանխատեսվող և փաստացի մեծությունները, ինչպես նաև փաստացի ֆինանսավորման չափերը 2017-2019թթ. ժամանակահատվածում:
3. Հաշվեքննվող օբյեկտի ենթակայության կրթական կազմակերպությունների կադրային ռեսուրսների և վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունները որքանո՞վ են ապահովել ոլորտը կարգավորող կանոնադրական խնդիրների լուծումը:

2.5 Հաշվեքննության չափանիշները

Հաշվեքննիչ պալատը գնահատել է Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի գործառույթները՝ համադրելով դրանք ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հետ:

2.6 Հաշվեքննության արդյունքում բացահայտված ամենաէական փաստերն ու դրանց ամփոփ նկարագրությունը

2.6.1 ՀՀ հաշվեքննիչ պալատին կատարողականի հաշվեքննության համար պահանջվող և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփ, սինթետիկ և անալիտիկ մակարդակների կտրվածքներով Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ով տրամադրվել են ժամկետների ուշացումներով, թերի, անձնական տվյալների սխալներով, կրկնվող տողերով և անհատականացման (նույնականացման) տվյալների բացակայությամբ:

2.6.2 ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի և հաշվետվությունների «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական և ամփոփ ֆինանսական ցուցանիշների տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ, իսկ Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր:

2.6.3 Նախարարության 2017-2019 թթ. ամփոփ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի վերլուծության արդյունքում առաջանում են ֆինանսական բացարձակ և հարաբերական ցուցանիշների համամասնությունների անհամապատասխանություններ:

2.6.4 Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար ուսանողների (սովորողների) միջին թվի (տարեկան պլան) հաշվարկման Նախարարության ներկայացրած բանաձևի (տրվում է ստորև) իրավակարգավորումների հիմքերը, գործակիցների, տոկոսային հավելումների, կիրառվող բացարձակ և հարաբերական տվյալները, նորմերն ու ցուցանիշները բացահայտված և հիմնավորված չեն:

2.6.5 Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի թվով 38 ուսումնական հաստատություններում թվով 410 աշխատակիցներ ընդհանուր 668 սահմանահատման դեպքերով և աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի (տաբելների) հետ համադրմամբ, բացակայությունների ընդհանուր թիվը 2019թ. տարեկան ընդհանուր հաշվարկով կազմում է 8646 օր: Ծրագիր 1-ի և Ծրագիր 2 գծով թվով 75 ուսումնական հաստատությունների թվով 622 ուսանողներ (սովորողներ) թվով 709 դեպքերով (տողեր) ըստ ՍԷԿՏ-ի և Բազայի հետ համադրման արդյունքների 2019թ. առնվազն 30 աշխատանքային օրեր բացակայել են հանրապետությունից:

3. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության շրջանակներում առանձնացված հարցադրումներից առաջինի մասով փաստվել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019թ. հոկտեմբերի 6-ի թիվ 18-Լ հրամանով հաստատված Նախարարության ենթակայությամբ գործող Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն 1) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019թ. հոկտեմբերի 6-ի թիվ 19-Լ հրամանով հաստատված Նախարարության ենթակայությամբ գործող Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության (այսուհետ Վարչություն 2) կանոնադրություններով սահմանված են մի շարք գործառույթներ:

Նախարարության Վարչություն 1-ի կանոնադրությամբ սահմանված է, որ վերջինս իրականացնում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, ուսուցման համակարգի գործունեության մոնիթորինգի կազմակերպումը, վերլուծությունը, մատուցվող կրթական և այլ ծառայությունների ծախսարդյունավետության գնահատումը, ոլորտին առընչվող գերատեսչությունների, կազմակերպությունների և կառույցների կողմից մշակված իրավական ակտերի ռազմավարական փաստաթղթերի, զեկույցների վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացումը, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակումը, վերանայումը, պետական կրթական չափորոշիչների մշակման, վերանայման, փորձարկման և ներդրման գործընթացների կազմակերպումը և այլն: Պայմանագրերով և Վարչություն 1-ի կանոնադրական խնդիրների լուծման նպատակով «Պատվիրատու»-ն պարտավոր էր «Կատարող»-ից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված ուսումնամեթոդական աշխատանքները և իրականացնել հաշվետվությունների վերաբերյալ սահմանված տեղեկատվություն, կատարել վերջիններիս կուտակում, մշակում և վերլուծություններ:

Նախարարության Վարչություն 2-ի կանոնադրությամբ սահմանված է, որ կառույցն իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերի մշակում, դրանց մոնիթորինգի իրականացում և գնահատում, բուհերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփում և այլն: Նշված գործառույթների իրականացման ապահովման համար պայմանագրերով սահմանված են «Պատվիրատու»-ի իրավունքները՝ ցանկացած ժամանակ ստուգել, պահանջել և ստանալ տեղեկույթ «Կատարող»-ի կողմից պայմանագրերի կատարման ընթացքի և որակի մասին, պահանջել ներկայացնելու՝ ֆինանսական և բովանդակային հաշվետվություն:

2019թ. Նախարարության Վարչություն 1-ում թվով 10 հաստիքային աշխատակիցներով, իսկ Վարչություն 2-ում՝ թվով 12 հաստիքային աշխատակիցներով համալրված են եղել ամբողջությամբ:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ով 2019թ. ըստ իրավական կազմակերպական կառուցվածքի ֆինանսավորված ընդամենը թվով 178 ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության կողմից 2019թ. ֆինանսավորված ԾՐԱԳՐԵՐ-ի ուսումնական հաստատությունների կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	Հիմնադրամներ	Պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ)	Սահմանափակ պատասխանատվության ընկերություններ (ՍՊԸ)	Պետական ուսումնական հաստատություններ (ՊՈՒՀ)	Փակ բաժնետիրական ընկերություններ (ՓԲԸ)	Ընդամենը՝
1	Ծրագիր 1	--	54	--	--	--	54
2	Ծրագիր 2	7	70	--	--	2	79
3	Ծրագիր 3	15	7	5	2	--	29
4	Ծրագիր 4	13	3	--	--	--	16
	Ընդամենը՝	**35**	**134**	**5**	**2**	**2**	**178**

Ընդհանուր առմամբ Նախարարության ԾՐԱՐԳՐԵՐ-ի ճշտված պլանի նկատմամբ ֆինանսավորման (դրամարկղային ծախսի) կատարողականը կազմել է 93,1%, այդ թվում՝ Ծրագիր 1-ի գծով 99,8%, Ծրագիր 2-ի գծով 92,1%, Ծրագիր 3-ի գծով՝ 93,1% և Ծրագիր 4-ի գծով՝ 77,5% (տես՝ Հավելված 2):

Նախարարությունը ԾՐԱԳՐԵՐ-ի ֆինանսական և հաշվապահական հաշվառումը վարել է (472900) «Այլ նպաստներ բյուջերից» (այսուհետ՝ Հոդված) հաշվով, ըստ որի դեբիտորական պարտքերի ընդհանուր 173,457.6 հազ. դրամի աճը պայմանավորված է տարեսկզբի և տարեվերջի հաշվարկների բանկի մնացորդով, ինչպես նաև՝ պահեստում որոշակի նյութերի մնացորդային առկայությամբ, իսկ կրեդիտորական պարտքերի ընդհանուր 19,453.5 հազ. դրամի աճը՝ 2019թ. դեկտեմբեր ամսվա կոմունալ վճարների՝ հաջորդ տարվա հունվար ամիս տեղափոխմամբ: Ըստ Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2019թ. դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների և շրջանառության վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության 2019թ. ԾՐԱԳՐԵՐ-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների և շրջանառության վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	Դեբիտորական պարտքեր			Կրեդիտորական պարտքեր		
		Մնացորդ տարեսկզբին	Մնացորդ տարեվերջում	***Աճ (+), նվազում (-)***	Մնացորդ տարեսկզբին	Մնացորդ տարեվերջում	***Աճ (+), նվազում (-)***
1	Ծրագիր 1	22,886.4	65,417.5	***+ 42,531.1***	2,445.1	9,757.6	***+7,312.5***
2	Ծրագիր 2	95,800.9	163,180.4	***+ 67,379.5***	652.4	6,790.4	***+ 6,138.0***
3	Ծրագիր 3	20,437.2	82,194.1	***+ 61,756.9***	0.0	136.0	***+ 136.0***
4	Ծրագիր 4	2,082.1	3,872.2	***+ 1,790.1***	0.0	5,867.0	***+ 5,867.0***
	Ընդամենը՝	**141,206.6**	**314,664.2**	***+ 173,457.6***	**3,097.5**	**22,551.0**	***+ 19,453.5***

Կատարողականի հաշվեքննության ընթացքում, ըստ հաշվեքննության առարկայի տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելիս առանձին սկզբունքների, ելնելով նպատակահարմարությունից, ընտրվել է սկզբունքների միասնական մոտեցումը: Ըստ նշված մոդելի Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն իրականացված հաշվեքննության արդյունքում ստացված փաստերի հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

3.1 Նախարարության Վարչություն 1-ը և Վարչություն 2-ը նպատակային արդյունավետության տեսակետից չեն տիրապետում այն տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է կանոնադրությամբ և պայմանագրերով վերոհիշյալ միջոցառումների համար սահմանված գործառույթների իրականացման մասով իրեն վերապահված խնդիրների լուծման համար (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ և 5-րդ գլուխների ենթակետերը):

3.2 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված երկրորդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրի 2017-2019թթ. ժամանակահատվածների շրջանակներում Նախարարությունը, Վարչություն 1-ը և Վարչություն 2-ը ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով տեղեկատվությունների համադրումներ, համեմատություններ, վերլուծություններ և մոնիթորինգ չեն իրականացնում, ինչի արդյունքում չեն համընկնում ամփոփագրերի և ընդամենագրերի կտրվածքներով տարբեր շտեմարաններում առկա համասեռ տեղեկատվությունը, ինչպես նաև վերջիններիս սինթետիկ և անալիտիկ մակարդակներում ձևավորվում են իրար հակասող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ: Նախարարության ենթակայության թվով 21 նախնական (արհեստագործական)

մասնագիտական, թվով 79 միջին մասնագիտական և թվով 29 բարձրագույն (նաև՝ հետբուհական) մասնագիտական կրթության կազմակերպությունների ոչ ֆինանսական, արդյունքային 2017-2019թթ. տարեկան ամփոփ չափորոշիչները ներկայացված են սույն եզրակացության 7-րդ գլխի Հավելված 2-ում:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին (սովորողին) 2017-2019թթ. բաժին ընկնող ֆինանսական ամփոփ տվյալների, դրանց հարաբերական ցուցանիշների և դինամիկայի վերաբերյալ տեղեկատվությունը տրված է ստորև (տես՝ Աղյուսակ 5)

Աղյուսակ 3

Նախարարության 2019թ. ԾՐԱԳՐԵՐ-ի միջին հաշվով մեկ պայմանական ուսանողական նպաստ ստացող ուսանողին (սովորողին) բաժին ընկնող ֆինանսական միջոցների և դինամիկայի վերաբերյալ

(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Ցուցանիշներ[2]	Միջին հաշվով մեկ պայմանական սովորողին բաժին ընկնող տարեկան միջին գումարը			*2018 - 2017 թթ դինամիկա (+,-)*	*2019 - 2018 թթ դինամիկա (+,-)*
		2017թ.	**2018թ.**	**2019թ.**		
Ծրագիր 1	Ըստ տարեկան պլան	324.8	314.6	283.0	*-10.2*	*-31.6*
	Ըստ տարեկան ճշտված պլան	307.8	304.1	308.7	*-3.7*	*4.7*
	Ըստ ֆինանսավորման	314.2	304.1	308.1	*-10.2*	*4.0*
	Ըստ փաստացի ծախսի	314.8	302.3	317.6	*-12.5*	*15.3*
Ծրագիր 2	Ըստ տարեկան պլան	430.3	361.5	330.1	*-68.8*	*-31.4*
	Ըստ տարեկան ճշտված պլան	338.5	336.4	347.6	*-2.0*	*11.2*
	Ըստ ֆինանսավորման	338.3	335.7	320.2	*-2.6*	*-15.5*
	Ըստ փաստացի ծախսի	340.7	333.2	319.6	*-7.5*	*-13.6*
Ծրագիր 3	Ըստ տարեկան պլան	729.6	703.7	692.6	*-25.8*	*-11.1*
	Ըստ տարեկան ճշտված պլան	712.8	697.3	692.6	*-15.5*	*-4.7*
	Ըստ ֆինանսավորման	726.3	716.6	644.6	*-9.7*	*-72.0*
	Ըստ փաստացի ծախսի	725.9	715.5	723.1	*-10.4*	*7.5*
Ծրագիր 4	Ըստ տարեկան պլան	308.5	301.7	337.0	-6.8	35.2
	Ըստ տարեկան ճշտված պլան	285.4	301.7	337.0	16.3	35.2
	Ըստ ֆինանսավորման	383.2	436.7	261.3	53.5	-175.4
	Ըստ փաստացի ծախսի	381.8	436.4	283.0	54.5	-153.4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում դիտարկված ժամանակահատվածների համադրությունների, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների

[2] *ԾՐԱԳՐԵՐ-ում տարեկան պլանի և ճշտված պլանի դեպքերում հարաբերումը վերաբերվում է տարեկան նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներին" իսկ ֆինանսավորման և փաստացի ծախսի դեպքերում՝ ըստ տարեկան փաստացի ցուցանիշի:*

միավորներին բաժին ընկնող վերլուծությունների արդյունքները, համեմատվող ժամանակահատվածների դինամիկայի համեմատությունները վկայում են, որ Նախարարությունը, Վարչություն 1-ը և Վարչություն 2-ը տարեկան կտրվածքներով ցուցանիշների ամփոփումներում, ընդհանրացումներում և կանխատեսումներում սահմանված գործառույթները բացակայում են (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ և 5-րդ գլուխների ենթակետերը):

Կատարողականի հաշվեքննության ժամանակ վերը ներկայացված և վերլուծված ընդհանուր կրթական ոլորտի հանրապետական ցուցանիշների և ըստ առանձին կազմակերպությունների 2017–2019թթ. դինամիկայի չի իրականացվել՝ համապատասխան տեղեկատվության թերի լինելու կամ տրամադրման ժամկետների ուշացման պատճառով:

3.3 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված երրորդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագիր 1-ում և Ծրագիր 2-ում ընդգրկված կրթական կազմակերպությունների աշխատակիցների մասով Նախարարությունը, Վարչություն 1-ը գործող իրավակարգավորումների շրջանակներում չի վերահսկում իրենց կողմից հաստատված անձնակազմերի հաստիքացուցակների մասնագիտական գործունեության արդյունավետությունը: Նախարարությունը և Վարչություն 1-ը չեն վերահսկում հանրապետությունից որոշակի ժամանակահատվածով բացակայող ինչպես աշխատակիցների համար հաշվարկվող և վճարվող աշխատավարձերը, այնպես էլ՝ Ծրագիր 1-ում և Ծրագիր 2-ում սովորողների (ուսանողների) մասնակցությունը ուսումնական գործընթացներին (տես՝ սույն ընթացիկ եզրակացության 4-րդ գլխի 4-7,4-8 և 4-9 ենթակետերը):

4. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

4.1 Կատարողականի հաշվեքննության համար անհրաժեշտ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված և Նախարարության կողմից 2017-2019թթ. ընդհանուր կրթական ոլորտին առընչվող ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշ-չափորոշիչների մասով ներկայացված տեղեկատվությունը ստացվել է նախատեսված ժամկետների ուշացումներով և պահանջներին ոչ համապատասխան, որոնց պատճառներով հնարավոր չի եղել ամբողջությամբ իրականացնել կատարողականի հաշվեքննությամբ սահմանված գործառույթները՝ համաձայն հաստատված առաջադրանքի: Մասնավորապես, գնահատել ըստ առանձին կրթական կազմակերպությունների կողմից իրականացվող «Ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվ» և «Ուսման վարձրավճարի լրիվ/մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողների թիվ» բաղադրիչների վերաբերյալ առկա տեղեկատվության, ըստ նախորդ ժամանակաշրջանների հետ դինամիկայի և համապատասխան ֆինանսավորման պայմաններում հնարավոր տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելու համար: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2017-2019թթ ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչների մասով ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն եզրակացության 7-րդ գլխի Հավելված 3-ում:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«...Նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունը 2019 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 18-Լ հրամանով հաստատված կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում իրականացնում է մի շարք տեղեկատվությունների հավաքագրում և վերլուծություն, մասնավորապես՝ ընդունելության արդյունքների ամփոփում, վերականգնված և տեղափոխված ուսանողների, ինչպես նաև աշխատանքի տեղավորված շրջանավարտների մասին, որի արդյունքում էլ հնարավորինս գնահատվում է Ծրագիր 1 և Ծրագիր 2-ի մատուցված ծառայությունների արդյունավետությունը:*

Ծրագիր 1-ը և Ծրագիր 2-ը իր մեջ ներառելով բազմագործառութային կրթական ծրագրեր, նախարարությունը մշակել և շրջանառել է ՀՀ կառավարության որոշումներ, որոնցից որոշներն ընդունվել են: ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից պատրաստվել և շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Նանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այն ներկայումս գտնվում է ՀՀ կառավարությունում:»

Հաշվեքննողների մեկնաբանությունները Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

4.2 Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր, կրթական

կազմակերպությունների հաստիքացուցակներում առկա են աշխատակիցների անհատական տվյալների, հանրային ծառայությունների համարանիշերի անճշտություններ (համադրման արդյունքներում չեն նույնականացվել ընդհանուր թվով 5843 անձանց տվյալներ), որոնց պատճառով հնարավոր չի եղել վերլուծել, համադրել, համեմատել և գնահատել ըստ առանձին կառույցների գործառույթների նպատակային և ծախսային արդյունավետությունը:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«...Նախագծի կարգում նախաձեռնվել են փոփոխություններ պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու գործընթացի կանոնակարգման անհրաժեշտությամբ պայմանավորված /սահմանված կարգով նախագիծը ներկայացվել է արդեն ՀՀ վարչապետի աշխատակազմ/: Նախագծով սահմանվել են պետական աջակցություն ստանալու համար ֆինանսավորման գործընթացի կարգավորումներ է, ըստ որի «Ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի (զեղչ)) նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին բյուջետային հատկացումների կարգադրիչ հանդիսացող պետական մարմնի և ուսումնական հաստատությունների միջև կնքվում են նպաստի տրամադրման մասին պայմանագրեր՝ նկատի ունենալով ուսման վճարի փոխհատուցման կանխատեսվող գումարի տարեսկզբի մեծությունը: Տվյալ տարում ընդունելությունների արդյունքների ամփոփումից հետո պետական մարմնի և ուսումնական հաստատությունների միջև կնքված պայմանագրերում կատարվում են փոփոխություններ՝ հաշվի առնելով ուսման վճարի փոխհատուցման ճշտգրված տարեկան թիվը:»:*

Հաշվեքննողների մեկնաբանությունները Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

4.3 Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի, հաշվետվությունների՝ «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական տվյալների և Նախարարության կողմից տրամադրված ըստ կրթական կազմակերպությունների ներկայացրած ամփոփ արդյունքային ցուցանիշների ընդամենագրերի միջև առկա են անհամապատասխանություններ:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«...Նախագծով ավելի վերահսկելի մեխանիզմներ են նախատեսվել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողներին պետության կողմից տրամադրվող նպաստների տրամադրման, տեղեկատվության հավաքագրման համար:»*

Հաշվեքննողների մեկնաբանությունները Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար ուսանողների (սովորողների) միջին թվի (տարեկան պլան) հաշվարկման Նախարարության ներկայացրած բանաձևի (տրվում է ստորև) իրավակարգավորումների հիմքերը, գործակիցների, տոկոսային հավելումների, կիրառվող բացարձակ և հարաբերական տվյալները, նորմերն ու ցուցանիշները բացահայտված և հիմնավորված չեն:

Տարեսկզբի ուսանողների (սովորողների) թիվ + Ընդունելության տեղեր/3 – Ավարտողների թիվ/2 + Եկածների թիվ (հաշվի առնելով գնացածների թվի 60%) – Մաղումներ (60%) = Ուսանողների (սովորողների) միջին թիվ (տարեկան պլան)

(այսուհետ՝ Բանաձև)

Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի շահառուների միջև կնքված պայմանագրերի համապատասխան կետերով նախատեսված տարեկան ֆինանսավորման ենթակա ուսանողական նպաստների գումարաչափերի (ուսման վարձերի փոխհատուցում) հաշվարկման մոտեցումները և մեխանիզմները, կիրառվող Բանաձևը, օգտագործված գործակիցները և ստացվող արդյունքները, մի կողմից, իրավական ակտերով հիմնավորված և կանոնակարգված չեն, մյուս կողմից, ըստ էության, ֆինանսավորման հիմքում բնութագրվում են առավելապես իբրև ուսանողական նպաստների տրամադրմամբ նախնական և միջին մասնագիտական կրթօջախների պահպանման ծախսերի փոխհատուցում:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

4.5 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2017-2019թթ. ընդհանուր կատարողականի գնահատման նպատակով դիտարկվել են 2017-2019թթ. Նախարարության ենթակայության կրթական հաստատությունների տարեկան ֆինանսական ցուցանիշները և ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչները: Դիտարկված երկու ժամանակաշրջանների (2018-2017թթ. և 2019-2018թթ.) ֆինանսական ցուցանիշների վերլուծության արդյունքում ստացվում են համամասնությունների անհամապատասխանություններ (տես՝ Հավելված 2 և Հավելված 3):

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

4.6 Նախարարության 2019թ. ծախսային արդյունավետությունը (նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը) գնահատելու նպատակով հաշվեքննության ընթացքում Նախարարության Ծրագիր 1-ի թվով 54 և Ծրագիր 2-ի թվով 79 ուսումնական հաստատություններից պահանջվել և ստացվել են թվով 7143 աշխատակիցների և թվով 30328 ուսանողների (սովորողների) վերաբերյալ տվյալներ: Կատարողականի հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան տեղեկատվությունը Նախարարության ենթակայության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի գծով ստացվել են թերի, ոչ հավաստի և ոչ լիարժեք, անընթեռնելի, որոշ դեպքերում՝ ժամկետների ուշացումներով, իսկ Ծրագիր 3-ի թվով 29 բուհերի կտրվածքով ցանկերը պահանջվել, սակայն Նախարարության կողմից տեղեկատվությունը չի տրամադրվել:

Համադրված նույնականացված թվով 31682 անձանց տվյալներից ստեղծվել է միասնական շտեմարան (այսուհետ՝ Բազա), որը, բացառապես Ծրագիր 1-ից և Ծրագիր 2-ից ստացված տվյալներով համադրվել է ՀՀ ոստիկանությունից հարցմամբ ստացված «Բնակչության Պետական Ռեգիստր»-ի (այսուհետ՝ ԲՊՌ) շեմարանի հետ: Ըստ համադրման արդյունքների չեն նույնականացվել ընդհանուր թվով 241 աշխատակիցների և թվով 6731 ուսանողների (սովորողների) տվյալներ, որոնք, ինչպես նաև Ծրագիր 3-ի գծով նպաստառու ուսանողների տվյալները չեն ներառվել Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ՍԷԿՏ): Կատարողականի հաշվեքննություն հիշյալ ուղղությամբ չի իրականացվել:

Բացային մնացած տվյալները համադրվել են ՍԷԿՏ համակարգի հետ՝ պարզելու համար անձանց ուսումնառության և աշխատելու ընթացքում ՀՀ սահմանահատումների վերաբերյալ տեղեկատվությունները: Նախարարության Ծրագիր 1 և Ծրագիր 2 ուսումնական հաստատությունների կողմից տրամադրված տեղեկատվության[3] և կատարված համադրումների արդյունքում պարզվեց, որ.

4.6.1 Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի թվով 38 ուսումնական հաստատություններում թվով 410 աշխատակիցներ ընդհանուր 668 սահմանահատման դեպքերով և աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի (տաբելների) հետ համադրմամբ, բացակայությունների ընդհանուր թիվը 2019թ. տարեկան ընդհանուր հաշվարկով կազմում է 8646 օր:

4.6.2 Ծրագիր 1 -ի և Ծրագիր 2 գծով թվով 75 ուսումնական հաստատությունների թվով 622 ուսանողներ (սովորողներ) թվով 709 դեպքերով (տողեր) ըստ ՍԷԿՏ-ի և Բազայի հետ համադրման արդյունքների 2019թ. առնվազն 30 աշխատանքային օրեր բացակայել են հանրակրթությունից:

Հաշվեքննվողի պարզաբանումը. «...Նախարարության կողմից ներկայացվել է ուսումնական հաստատություններից ստացված պարզաբանումներ աշխատակիցների և ուսանողների բացակայությունների վերաբերյալ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունները Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

---

[3] *Տեղեկատվությունը ստացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 11-ի հարցմամբ Նախարարության Գլխավոր քարտուղարի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ 04/23.1/18856 – 2021 գրությամբ:*

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

5.1 Նախարարության Ծրագիր 1-ում 2019թ. սովորողների թիվը նախատեսվածից 337-ով (4,9%) փաստացի նվազման պայմաններում ֆինանսավորումը (դրամարկղային ծախսը) նվազել է ընդամենը՝ 11,261.9 հազ. դրամով (0,6%), իսկ 2019թ-ին 2018թ-ի համեմատ սովորողների փաստացի թվի 20-ով (0,3%) նվազման պայմաններում ֆինանսավորումը (դրամարկղային ծախսը) նշված ժամանակահատվածում աճել է 124,199.2 հազ. դրամով (6,2%):

5.2 Նախարարության Ծրագիր 1-ում 2018թ-ին 2017թ-ի համեմատ, նախատեսված 95 սովորողների աճի (6553-6458) պայմաններում փաստացի ցուցանիշն աճել է 232 սովորողներով (6553-6321): Նշված ժամանակահատվածում միջին հաշվով մեկ պայմանական սովորողին բաժին ընկնող տարեկան պլանը և ֆինանսավորումը նվազել են 10.2 հազ. դրամով, ճշտված պլանը՝ 3.7 հազ. դրամով, փաստացի ծախսը՝ 12.5 հազ. դրամով:

2019թ-ին 2018թ-ի համեմատ նշված ցուցանիշը դիտարկելիս նախատեսված 317 սովորողների աճի (6870 - 6553) պայմաններում փաստացի ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 6553: Նշված ժամանակահատվածում միջին հաշվով մեկ պայմանական սովորողին բաժին ընկնող տարեկան պլանը նվազել է 31.6 հազ. դրամով, ճշտված պլանը աճել է 4.7 հազ. դրամով, ֆինանսավորումը աճել է 4.0 հազ. դրամով, փաստացի ծախսը աճել է 15.3 հազ. դրամով:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

5.3 Նախարարության Ծրագիր 2-ում 2019թ. ուսանողների թվի նախատեսվածից 158-ով (0,9%) փաստացի նվազման պայմաններում ֆինանսավորումը (դրամարկղային ծախսի) նվազել է ընդամենը՝ 39,561.2 հազ. դրամ (12,0%), իսկ 2019թ-ին 2018թ-ի համեմատ ուսանողների փաստացի թվի 1890-ով աճի (12,0%) պայմաններում ֆինանսավորումը (դրամարկղային ծախսը) նշված ժամանակահատվածում աճել է 412,144.6 հազ. դրամով (7,8%):

5.4 Համաձայն Նախարարության տրամադրած տեղեկատվության Ծրագիր 2-ի ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ ստացող ուսանողների քանակը 2018թ-ին 2017թ-ի համեմատ նախատեսվածի և փաստացիի ընդհանուր աճը կազմել է 1094 ուսանող (15740 - 14646): 2019թ-ին՝ 2018թ-ի համեմատ, ուսանողական նպաստ ստացող ուսանողների քանակի ընդհանուր աճը նախատեսվել է 2048-ով (17788 -15740), սակայն փաստացին աճել է 1890-ով (17630 - 15740):

Ծրագիր 2-ում 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ, թվով 1094 ուսանողների ավել պլանավորման պայմաններում, միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին բաժին ընկնող տարեկան պլանը նվազել է 68.8 հազ. դրամով, ճշտված պլանը՝ 2.0 հազ. դրամով, ֆինանսավորումը և փաստացի ծախսը՝ 2.6 հազ.-ական դրամներով:

2019թ.-ին 2018թ.-ի համեմատ, թվով 1094 սովորողների ավել պլանավորման պայմաններում, միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին բաժին ընկնող տարեկան պլանը նվազել է 31.4 հազ. դրամով, ճշտված պլանը՝ 11.2 հազ. դրամով, ֆինանսավորումը՝ 15.5 հազ. դրամով, իսկ փաստացի ծախսը՝ 13.6 հազ. դրամով:

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

5.5 Համաձայն Նախարարության տրամադրած տեղեկատվության Ծրագիր 3-ում ընդգրկված բուհերում ուսանողական նպաստ ստացող ուսանողների քանակը.

5.5.1 2018թ. 2017թ. համեմատ աճ է նախատեսվել 243-ով (11722 - 11479), չնայած 2017թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 226 ուսանող:

5.5.2 2019թ.-ին՝ 2018թ.-ի համեմատ, ուսանողական նպաստ ստացող ուսանողների քանակի ընդհանուր աճը նախատեսվել է 214-ով (11936 -11722), չնայած 2018թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 460 ուսանող:

5.5.3 2018թ. 2017թ. համեմատ փաստացի ցուցանիշը աճել է 9-ով (11262 - 11253), իսկ 2019թ.-ին՝ 2018թ.-ի համեմատ փաստացի ցուցանիշը նվազել է 706-ով (10556 - 11262): 2019թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 1380 ուսանող:

Վերը նշված հանգամանքներում, Ծրագիր 3-ում 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ, միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին բաժին ընկնող տարեկան ուսանողական նպաստի գումարի պլանը նվազել է 25.8 հազ. դրամով (703,7 - 729,6), ճշտված պլանը՝ 15.5 հազ. դրամով (697,3 - 712,8), ֆինանսավորումը՝ 9.7 հազ. դրամով (716,6 - 726,6), իսկ փաստացի ծախսը՝ 10.4 հազ. դրամով (715,5 - 725,9): 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ, միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին բաժին ընկնող տարեկան պլանը նվազել է 11.1 հազ. դրամով (692,6 - 703,7), ճշտված պլանը՝ 4.7 հազ. դրամով (692,6 - 697,3), ֆինանսավորումը՝ 72.0 հազ. դրամով (644,6 - 716,6), իսկ փաստացի ծախսը՝ աճել է 7.5 հազ. դրամով (723,1 - 715,5):

Հաշվեքննվողի պարզաբանումը. *«Ընդունվել է ի գիտություն:»*

5.6 Նախարարության Ծրագիր 4-ում ընդգրկված բուհերում և այլ գիտական, գիտատեխնիկական կազմակերպություններում ուսանողական (ասպիրանտներ, դոկտորանտներ) նպաստ ստացողների քանակը.

5.6.1 2018թ. 2017թ. համեմատ աճ է նախատեսվել 161-ով (1676 - 1515), չնայած 2017թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 394 նպաստառու:

5.6.2 2019թ. 2018թ. համեմատ նախատեսվել է նվազում նվազում 155-ով (1521 - 1676), չնայած 2018թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 688 նպաստառու:

5.6.3 2018թ. 2017թ. համեմատ փաստացի ցուցանիշը նվազել է 133-ով (988 - 1121), իսկ 2019թ.-ին՝ 2018թ.-ի համեմատ փաստացի ցուցանիշը աճել է 431-ով (1419 - 988): 2019թ. փաստացիի և նախատեսվածի տարբերությունը կազմել է – 102 նպաստառու:

Վերը նշված հանգամանքներում, Ծրագիր 4-ում 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ, միջին հաշվով մեկ պայմանական նպաստառուին բաժին ընկնող տարեկան նպաստի գումարի պլանը նվազել է 6.8 հազ. դրամով (301,7 - 308,5), ճշտված պլանը աճել է 16.3 հազ. դրամով (301,7 - 285,4), ֆինանսավորումը աճել է 53.5 հազ. դրամով (436,7 - 383,2), իսկ փաստացի ծախսը՝ 54.5 հազ. դրամով (436,4 - 381,8): 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ, միջին հաշվով մեկ պայմանական ուսանողին բաժին ընկնող տարեկան պլանը և ճշտված պլանը աճել են 35.3 հազ. դրամով (337,0 - 301,7), ֆինանսավորումը նվազել է 175.4 հազ. դրամով (436,7 - 261,3):

Հաշվեքննվողի պարզաբանումները. *«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-317-Ն օրենքով աջակցություն ստացող ուսանողների շրջանակում ներառվել են նաև մարտական գործողությունների մասնակից ուսանողները, նախատեսվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել նպաստների տրամադրման կարգում:*

Հարկ ենք համարում նշել, որ Կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 65-Ն հրամանով սահմանվել է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը, որով նախատեսվում է ներդնել կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստր, որի արդյունքում հնարավոր կլինի պատշաճ իրականացնելու ուսումնական հաստատություններից, այդ թվում բուհերից տեղեկատվության հավաքագրում և վերահսկողություն: Վարչություն 2-ը արդեն միջոցներ է ձեռնարկել տարեկան և կիսամյակային կտրվածքներով բուհերից պահանջելու պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների վերաբերյալ անվանական տեղեկատվություն՝ ըստ մշակված ձևաչափերի, որտեղ ներառված են նաև ուսանողների նույնականացման տվյալների պարտադիր պահանջ:Սրանով հնարավորություն կստեղծվի ունենալու և վարելու առանձնացված բազաներ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Վարչություն 2-ը արդեն միջոցներ է ձեռնարկել տարեկան և կիսամյակային կտրվածքներով բուհերից պահանջելու պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների վերաբերյալ անվանական տեղեկատվություն՝

ըստ մշակված ձևաչափերի, որտեղ ներառված են նաև ուսանողների նույնականացման տվյալների պարտադիր պահանջ, կվերանայվեն նաև բուհերի հետ կնքվող պայմանագրերի ձևերը:

Սրանով կապահովվի վերահսկողությունը պետական բյուջեից տրամադրվող նպաստների նկատմամբ, կիստակեցվեն բուհերի կողմից տարբեր կուրսերում սահմանվող ուսման վարձերի վերանայումները, ռոտացիայի ցուցակները, դրանցում կատարվող փոփոխությունները /քանակական, գումարային, անվանական/: Արդյունքում կկատարվեն նաև վերլուծություններ:

Բացի օրենքով սահմանված շրջանակից, սովորողների այլ խմբերի ուսման վարձի փոխհատուցում հատկացնելը անհրաժեշտություն էր դարձել հատկապես երկրում հայտարարված արտակարգ դրության սահմանափակումների պայմաններում և ռազմական դրությամբ պայմանավորված:»

Հաշվեքննողների մեկնաբանությունները Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

Պարզաբանման վերջին պարբերության բովանդակությունը չի համապատասխանում կատարողականի հաշվեքննության առաջադրանքով սահմանված՝ ընդգրկման ժամանակաշրջանի հետ (2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ը):

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից սույն ընթացիկ եզրակացության մեջ ներկայացված թվով 8 անհամապատասխանությունների և թվով 10 այլ փաստերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը թվով 10-ն ընդունել է ի գիտություն, իսկ թվով 6-ի մասով տրամադրվել են պարզաբանումներ: Նախարարության կողմից ներկայացված թվով 2 առարկությունները հաշվեքննողների կողմից չեն ընդունվել, քանի որ վերջիններս, ըստ էության, պարզաբանումներ և ձեռնարկվող միջոցառումներ են:

Կից ներկայացվում է կատարողականի հաշվեքննության արձանագրության վերաբերյալ Նախարարության 2021թ. հոկտեմբերի 18-ի թիվ 1/17.2/ 23816 – 2021 գրությունը (16 էջ):

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

6.1 Քննարկել և լուծումներ առաջարկել Նախարարության կողմից հաստատված կրթական կազմակերպությունների կանոնադրություններով, Նախարարության հետ կնքված ուսանողական նպաստների տրամադրման պայմանագրերով սահմանված Նախարարությանը ներկայացվող հաշվետվությունների տվյալների ստուգման, գործառույթների, ֆինանսական և ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշների ճշգրտության, իրավասության և արժանահավատության գործառույթները վերահսկելու ուղղությամբ:

6.2 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն Նախարարության ենթակա կրթական կազմակերպությունների աշխատակիցների կողմից ՍԷԿՏ համակարգով սահմանահատումների ժամանակահատվածներում բացակայությունների աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում արձանագրման աշխատանքները, աշխատավարձերի հաշվարկման և վճարման անհամապատասխանությունները, ինչպես նաև՝ սովորողների (ուսանողների) կողմից հանրապետությունից բացակայելու և ուսումնական պրոցեսին մասնակցության հարցերը:

6.3 Հսկողություն սահմանել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման ժամկետների, ամբողջականության, լիարժեքության և պահանջված ձևաչափերով տրամադրման վրա:

6.4 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում և կատարման ժամանակացույց:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Ա. Բախչագուլյան

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2019թ. ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	Պլան	Ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Դրամար-կղային ծախս	Փաստացի ծախս
1	Ծրագիր 1	1,943,909.8	2,121,105.3	2,116,657.0	2,116,657.0	2,081,438.4
2	Ծրագիր 2	5,872,022.7	6,183,667.9	5,696,392.5	5,696,392.5	5,635,151.0
3	Ծրագիր 3	8,267,291.3	8,267,291.3	7,694,176.7	7,694,176.7	7,632,555.8
4	Ծրագիր 4	512,525.8	512,525.8	397,452.1	397,452.1	401,529.5
	Ընդամենը՝	16,595,749.6	17,084,590.3	15,904,678.3	15,904,678.3	15,750,674.7

Հավելված 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2017 / 2019թթ. ամփոփ ֆինանսական ցուցանիշներ և դինամիկա

(հազ. դրամ)

Թիվ	Ցուցանիշներ	201 թ.	2018թ.	2019թ.	2018/2017 թթ. դինամիկան (+ , -)	2019/2018 թթ. դինամիկա (+ , -)	2017/2019 թթ. ընդհանուր դինամիկա (+ , -)
1	Տարեկան պլան, ***այդ թվում՝***	17,241,832.7	16,506,946.3	16,595,749.6	-734,886.4	88,803.3	-646,083.1
	Ծրագիր 1	2,097,493.4	2,061,389.0	1,943,909.8	-36,104.4	-117,479.2	-153,583.6
	Ծրագիր 2	6,302,292.3	5,690,515.8	5,872,022.7	-611,776.5	181,506.9	-430,269.6
	Ծրագիր 3	8,374,643.6	8,249,352.5	8,267,291.3	-125,291.1	17,938.8	-107,352.3
	Ծրագիր 4	467,403.4	505,689.0	512,525.8	38,285.6	6,836.8	45,122.4
2	Ճշտված պլան, ***այդ թվում՝***	15,559,615.8	15,967,519.6	17,084,590.3	407,903.8	1,117,070.7	1,524,974.5
	Ծրագիր 1	1,987,493.4	1,992,457.8	2,121,105.3	4,964.4	128,647.5	133,611.9
	Ծրագիր 2	4,956,951.2	5,295,317.3	6,183,667.9	338,366.1	888,350.6	1,226,716.7
	Ծրագիր 3	8,182,767.8	8,174,055.5	8,267,291.3	-8,712.3	93,235.8	84,523.5
	Ծրագիր 4	432,403.4	505,689.0	512,525.8	73,285.6	6,836.8	80,122.4
3	Ֆինանսավորում, ***այդ թվում՝***	15,543,774.5	15,778,446.3	15,904,678.3	234,671.8	126,232.0	360,903.8
	Ծրագիր 1	1,986,171.4	1,992,457.8	2,116,657.0	6,286.4	124,199.2	130,485.6
	Ծրագիր 2	4,954,664.8	5,284,247.9	5,696,392.5	329,583.1	412,144.6	741,727.7
	Ծրագիր 3	8,173,424.0	8,070,292.7	7,694,176.7	-103,131.3	-376,116.0	-479,247.3
	Ծրագիր 4	429,514.3	431,447.9	397,452.1	1,933.6	-33,995.8	-32,062.2
4	Դրամարկղային ծախս, ***այդ թվում՝***	15,543,774.5	15,778,446.3	15,904,678.3	234,671.8	126,232.0	360,903.8
	Ծրագիր 1	1,986,171.4	1,992,457.8	2,116,657.0	6,286.4	124,199.2	130,485.6
	Ծրագիր 2	4,954,664.8	5,284,247.9	5,696,392.5	329,583.1	412,144.6	741,727.7
	Ծրագիր 3	8,173,424.0	8,070,292.7	7,694,176.7	-103,131.3	-376,116.0	-479,247.3
	Ծրագիր 4	429,514.3	431,447.9	397,452.1	1,933.6	-33,995.8	-32,062.2

5	Փաստացի ծախս, ***այդ թվում՝***	15,576,680.3	15,715,321.3	15,750,674.7	138,641.0	35,353.4	173,994.4
	Ծրագիր 1	1,989,981.6	1,981,195.9	2,081,438.4	*-8,785.7*	100,242.5	91,456.8
	Ծրագիր 2	4,989,979.1	5,244,686.7	5,635,151.0	254,707.6	390,464.3	645,171.9
	Ծրագիր 3	8,168,689.4	8,058,308.8	7,632,555.8	-110,380.6	-425,753.0	-536,133.6
	Ծրագիր 4	428,030.2	431,129.9	401,529.5	3,099.7	-29,600.4	-26,500.7
6	**Կատարողական** *(Ֆինանսավորում՝ ըստ ճշգրված պլանի)* ***(%)***	99.9	98.8	93.1	-1.1	-5.7	-6.8
	Ծրագիր 1	99.9	100.0	99.8	0.1	-0.2	-0.1
	Ծրագիր 2	100.0	99.8	92.1	-0.2	-7.7	-7.8
	Ծրագիր 3	99.9	98.7	93.1	-1.2	-5.7	-6.8
	Ծրագիր 4	99.3	85.3	77.5	-14.0	-7.8	-21.8

Հավելված 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2017-2019թթ. ոչ ֆինանսական արդյունքային չափորոշիչների (ուսանողական նպաստներ ստացող սովորողներ / ուսանողներ/) վերաբերյալ

ԾՐԱԳՐԵՐ	*Տարիներ, համեմատականներ*	*Նախատեսված (մարդ)*	*Փաստացի (մարդ)*	*Տարբերություն (+,-)*
1	*2*	*3*	*4*	*5*
Ծրագիր 1	*2017 թ.*	6458	6321	-137
	2018 թ.	6553	6553	0
	2019 թ.	6870	6533	-337
	2018 թ-ին 2017 թ.-ի համեմատ	95	232	137
	2019 թ-ին 2018 թ.-ի համեմատ	317	0	-317
Ծրագիր 2	*2017 թ.*	14646	14646	0
	2018 թ.	15740	15740	0
	2019 թ.	17788	17630	-158
	2018 թ-ին 2017 թ.-ի համեմատ	1094	1094	0
	2019 թ-ին 2018 թ.-ի համեմատ	2318	1890	-428

1	2	3	4	5
Ծրագիր 3	2017 թ.	11479	11253	-226
	2018 թ.	11722	11262	-460
	2019 թ.	11936	10556	-1380
	2018 թ-ին 2017 թ.-ի համեմատ	243	9	-243
	2019 թ-ին 2018 թ.-ի համեմատ	214	-706	-463
Ծրագիր 4	2017 թ.	1515	1121	-394
	2018 թ.	1676	988	-688
	2019 թ.	1521	1419	-102
	2018 թ-ին 2017 թ.-ի համեմատ	161	-133	-28
	2019 թ-ին 2018 թ.-ի համեմատ	-155	431	-585
Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ	2017 թ.	27964	27379	-585
	2018 թ.	35691	34543	-1148
	2019 թ.	38115	36138	-1977
	2018 թ-ին 2017 թ.-ի համեմատ	4727	7164	2437
	2019 թ-ին 2018 թ.-ի համեմատ	2424	1595	-829

Հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ***«Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրման*** *նկատմամբ* ***2019 թվականի*** *կատարողականի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ*

Հ/Հ	Հաշվեքննության առարկան, որի գծով արձանագրվել է անհամապատասխանությունը ծրագիր/միջոցառում/ հոդված	Հաշվեքննության առարկայի չափանիշը՝ իրավական ակտը կամ պայմանագիրը, որի դրույթների հետ կապված արձանագրվել է անհամապատասխանություն /նշել անվանումը, հոդվածը, մասը, կետը և մեջբերել իրավական ակտի կամ պայմանագրի վերաբերելի հատվածը/	Անհամապատասխանության ամփոփ նկարագիրը (մինչև 50 բառ)	Անհամապատասխանության բնութագիրը (բարձր, միջին, ցածր)	Հղում ըստ հիմնական գործընթացների 1 փաստաթղթի՝ գործընթացային ռիսկերի գրանցամատյանում
1		«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս:	Կատարողականի հաշվեքննության համար անհրաժեշտ և Նախարարության կողմից 2017 2019թթ. ընդհանուր կրթական ոլորտին առընչվող ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշ-չափորոշիչների մասով ներկայացված տեղեկատվությունը ստացվել են նախատեսված ժամկետների ուշացումներով և պահանջներին ոչ համապատասխան:	Ցածր	էջ 13
2			Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր, կրթական կազմակերպությունների հաստիքացուցակներում առկա են աշխատակիցների անհատական տվյալների, հանրային ծառայությունների համարանիշերի անճշտություններ (համադրման արդյունքներում չեն նույնականացվել ընդհանուր թվով 5843 անձանց տվյալներ)	Ցածր	էջ 14
3		ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման:	Համաձայն Նախարարության հաշվետվությունների՝ «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական տվյալների և Նախարարության կողմից տրամադրված ըստ կրթական կազմակերպությունների ներկայացրած ամփոփ արդյունքային ցուցանիշների ընդամենագրերի միջև առկա են անհամապատասխանություններ:	Ցածր	էջ 14
4	**«Ելդեշտի վերնոտաղ Ելդ (472900)** *«Ուսանողական նպաստներ տրամադրելու մասին հարցերի կարգավորման ուսանողների տարեկան ծրագրի կազմելու կարգ ու ժամկետներ»*	Իրավակարգավորումների հիմքերը բացակայում են:	Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար ուսանողների (սովորողների) միջին թվի (տարեկան պլան) հաշվարկման Նախարարության ներկայացրած բանաձևի իրավակարգավորումների հիմքերը, գործակիցների, տոկոսային հավելումների, կիրառվող բացարձակ և հարաբերական տվյալները, նորմերն ու ցուցանիշները բացահայտված և հիմնավորված չեն	Ցածր	էջ 14
5	**(1045 - 12004)** «Միջին մասնագիտական կրթության դպրոցների դասավանդման ոլորտում գործող ուսանողական նպաստների տրամադրման կարգը» **(1111 - 12004)** *«Բարձրագույն մասնագիտական կրթության դպրոցների դասավանդման ոլորտում գործող ուսանողական նպաստների տրամադրման կարգը»* **(1111 - 12005)** *«Հետբուհական մասնագիտական կրթության դպրոցների դասավանդման ոլորտում գործող ուսանողական նպաստների տրամադրման կարգը»*	Կատարողականի հաշվեքննության աշխատանքային փաստաթղթեր	Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2017-2019թթ. ընդհանուր կատարողականի գնահատման նպատակով դիտարկված երկու ժամանակաշրջանների (2018-2017թթ. և 2019-2018թթ.) կտրվածքով Նախարարության ենթակայության կրթական հաստատությունների տարեկան ֆինանսական ցուցանիշները և ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչների վերլուծության արդյունքում ստացվում են համամասնությունների անհամապատասխանություններ	Ցածր	էջ 15
6	**(104010)** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության, դպրոցական նախադպրոցական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական դպրոցների կրթական ծրագրերի 2019 թվականի կարգավորման **(1045 - 12003)** «Նախնական մասնագիտական (արհեստագործական) դպրոցների կրթական ծրագրերի 2019 թվականի կարգավորման մասին»		Ըստ Նախարարության Ծրագրերի ֆինանսական տվյալներից և ոչ ֆինանսական ամփոփ չափորոշիչներից հաշվարկված հարաբերական մեկ ցուցանիշների դիտարկմամբ պարզվել է, որ 2019թ-ին 2018թ-ի համեմատ Նախարարության Ծրագրերի տարեկան փաստացի ծախսերը նվազել են ընդամենը՝ 77,871.6 հազ. դրամով (5,429,629.8 – 5,507,501.4):	Ցածր	էջ 16

1	2	3	4	5	6
7	«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պետական կառավարման տարածքային մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1879-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետ, «Հանրակրթության ոլորտում պետական ծառայություն իրականացնող կազմակերպությունների գծով պետական մասնակցության մասնակցության կիրառման ենթակա գործառույթների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1879-Ն որոշման հավելվածի 1-ին կետ (արտադրանքի (ծառայությունների) տեսակներ՝ (1045 - 12003) «Լսողության տարաբնույթ խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դաստիարակություն իրականացնող կրթական հաստատություն» (1045 - 12004) «Միջին մասնագիտական կրթություն տվող հատուկ դպրոց» (1111 - 12004) «Բարձրագույն մասնագիտական կրթություն տվող հատուկ դպրոց» (1111 - 12005) «Հեռակա ուսուցմամբ զբաղվող ուսանողների ընդունելության գծով մասնագիտացված դպրոց» (47900) «Էլեկտրոնային առևտուր» (104010) «Հանրակրթական դպրոցներ» (1045 - 12003) «Լսողության տարաբնույթ խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դաստիարակություն իրականացնող կրթական հաստատություն»	Կատարողականի հաշվեքննության աշխատանքային փաստաթղթեր	Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի թվով 38 ուսումնական հաստատություններում թվով 410 աշխատակիցներ ընդհանուր 668 սահմանահատման դեպքերով և աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի (տաբելների) հետ համադրմամբ, բացակայությունների ընդհանուր թիվը 2019թ. տարեկան ընդհանուր հաշվարկով կազմում է 8646 օր:	Բարձր	էջ 16
8			Ծրագիր 1 -ի և Ծրագիր 2 գծով թվով 75 ուսումնական հաստատությունների թվով 622 ուսանողներ (սովորողներ) թվով 709 դեպքերով (տողեր) ըստ ՍԷԿՏ-ի և Բազայի հետ համադրման արդյունքների 2019թ. առնվազն 30 աշխատանքային օրեր բացակայել են հանրապետությունից:	Բարձր	էջ 17

Վարչության պետ Արմեն Ռուբենյան

Վավերացնում եմ՝ Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյան